Ամփոփ նյութ

«ԱՎԴՈՅԱՆՆԵՐ» ՍՊԸ (ԼԻՑԵՆԶԻԱ 865) ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԵՏԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ «ԱՎԴՈՅԱՆՆԵՐ» ՍՊԸ (լիցենզիա 865) փոխանակման կետի նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց՝ արժութային գործունեությունը կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտման համար:

Ստորև ներկայացված է որոշման վերնագիրը և եզրափակիչ մասը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ
ՈՐՈՇՈՒՄ
18/04/2024 **ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1/**140 **-Ա**
«ԱՎԴՈՅԱՆՆԵՐ» ՍՊԸ (ԼԻՑԵՆԶԻԱ 865) ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԵՏԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Սույն որոշման նկարագրական մասի 1-ին կետով նկարագրված խախտումները թույլ տալու համար «ԱՎԴՈՅԱՆՆԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ԼԻՑԵՆԶԻԱ ԹԻՎ 865) փոխանակման կետի նկատմամբ կիրառել տուգանք 4.000.000 (չորս միլիոն) ՀՀ դրամ գումարի չափով:
2. Սույն որոշման նկարագրական մասի 2-րդ կետերով նկարագրված խախտումները թույլ տալու համար Փոխանակման կետի նկատմամբ կիրառել **նախազգուշացում՝ ապագայում նման խախտումներ թույլ չտալու հանձնարարականով**:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փոխանակման կետ մուտքագրվելու կամ Փոխանակման կետի՝ սահմանված կարգով լիազորված անձին հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
4. Սույն որոշումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **ՄԱՐՏԻՆ ԳԱԼՍՏՅԱՆ**